Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ
3403 ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի,
փ. Գործարարներ 42, հեռ. 0286-60685
email: agarak-hosp@mail.ru

Мегру тарацаштджанаин бжшкакан кентрон ЗАО
3403 РА Сюник марз,г.Мегри,
ул. Горцарарнер 42 тел. 0286-60685

«Ագաստ» ՍՊԸ
ՀՎՀՀ 00435781
ՀՀ ք .Երևան, Տիգրան Պետրոսյան 31

№ 63
" 11 " մարտի 2024թ.

Ծանուցում

Հարգելի մատակարար.

«Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 04.01.2024թ-ին «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և 10.01.2024 թ-ին «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով կնքվել են պայմանագրեր, որոնց շրջանակներում 25.01.2024թ. «Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ի կողմից agastllc@mail.ru էլեկտրանային հասցեով պատվիրվել է Ազիթրոմիցին 500մգ-30հաբ, Դիկլոֆենակ 75մգ/3մլ-110 սրվակ, Դիցինոն 250մգ/2մլ-100սրվակ, Թիմոլոլ ակնակաթիլ- 2 սրվակ, Վիցետին 5մգ/մլ 2մլ-100սրվակ, Տիրեզ դ/հ թ/պ 5մգ-200հաբ, Մագնեզիումի սուլֆատ ամպ. 25% 5մլ-200սրվակ, Մետրոնիդազոլ 0,5% 100մլ-30պլ/փաթեթ, որոնք չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերը (ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 7օրից ավելի) «Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ն 2024թ-ի մարտ 11-ին միակողմանի մասնակի լուծել է պայմանագրերը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ և «Ագաստ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3 ծածկագրով պայմանագրի համար 545 ՀՀ դրամ, ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3 ծածկագրով պայմանագրի համար 681 ՀՀ դրամ տույժ, որը հաշվարկված է մինչև 11.03.2024թ.:

« Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա)պարբերությամբ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման 32-րդ կետի 17) ենթակետի դ. պարբերության համաձայն, եթե կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում եմ մինչև 07.03.2024թ.ներառյալ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին փոխանցել ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման 38265 ՀՀ դրամը և ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման 50460 ՀՀ դրամը, ինչպես նաև Պայմանագրերի ապահովման համար ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին փոխանցել ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3 ծածկագրով պայմանագրի ապահովման 25510 ՀՀ դրամը և ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3 ծածկագրով պայմանագրի ապահովման 33640ՀՀ դրամը: Նշված գումարների վճարման կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Մեղրի, Գործարարների 42 հասցեով:

Միաժամանակ տեղեկացնում եմ , որ նշված ժամկետում գումարները չվճարելու դեպքում Ձեր ընկերությունը կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

<< Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>>ՓԲԸ

Տնօրենի ժ/պ՝ Մ. Աբրահամյան

Կատարող՝ Ա. Վարդանյան
Հեռ. 096061015